Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
Լանջիկի «Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ»
ՀՈԱԿ-ի տնօրեն 2026 թվականի ապրիլի «29»-ի N 32 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանում | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ»<br><br>1. Մեթոդիստ -0,75 դրույք/135000 ՀՀ դրամ աշխատավարձ:<br><br>2. Դաստիարակ - 0.585 դրույք/ 87750 ՀՀ դրամ աշխատավարձ: | 1. Որակավորման պահանջները<br><br>1/1 Հաստատության մեթոդիստի՝ ուսումնական գծով տեղակալի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br><br>1/2 Հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը<br>1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2. դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությա | Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:<br>1. դիմում (Ձև1)<br>2. Կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)<br>3. Անձը հաստատող փաստաթուղթ<br>4)Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 3. Դաստիարակ - 0.585 դրույք/87750 ՀՀ դրամ աշխատավարձ:<br><br>4. Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ - 0.5 դրույք / 58000 ՀՀ դրամ աշխատավարձ: | առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br><br>1/3 Հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝<br>1. Միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնավազն երեք տարվա ստաժ:<br>2. Դպրոցահեն նախակրթարաններում նաև «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «ֆիզկուլտուրա» առարկան :<br><br>2.Ընդհանրական պահանջները<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի դաստիարակի և ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնները զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները դաստիարակչական հարցերը. ըստ ոլորտի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները մանկավարժության հոգեբանության երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | մբ զբաղվելու իրավունքից<br>3. տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը<br>4. Դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | (առկայության դեպքում)<br>5)Ինքնակենսագրություն (Ձև4)<br>4. Մեկ լուսանկար 3×4 չափի<br>5. այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ<br>6. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական<br>7. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Մրցույթն անցկացնելու վայր, օրը, ժամը<br><br>Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք Լանջ իկ բնակավայր, 1-ին փողոց 35/1 մանկապարտեզ<br>Օրը՝ 2026 թվականի հունիսի 5-ին ժամը՝ 11:00 | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը<br>ՀՀ Շիրակի մարզ. Անի համայնք գ. Լանջիկ 1-ին փողոց 35/1 մանկապարտեզ<br><br>Փաստաթղթերը ներկայացնելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ»ՀՈԱԿ Հեռ.098989363<br>Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:<br>Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/files/files/2024-10-23/cabaf0475d7f79ebda1d3b036d05e5d0.pdf/ | | Դիմումների և Փաստաթղթերի ներկայացման ժամկետները<br><br>2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2026 թվականի հունիսի 2-ը ներառյալ |
| 3 | Մրցույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով | Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր ժամը 09:00-18:00 բացի շաբաթ կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:<br>Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել **anicity.am** **http://shirak.mtad.am** կայքում | | |